ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1385-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> 600-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատվածկարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ դեկտեմբերի 5-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ա որոշումը, ըստ 19.08.2020թ ժառանգության վկայագրի և Զարուհի Մարգարյանի 12.07.2023 թ. թիվ 4056 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Զարուհի Մարգարյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող 04-043-0840-կադաստրային ծածկագրով 500.0 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 80.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան՝ սեփականության իրավունքով:

2. Զարուհի Մարգարյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող 04-043-0840-կադաստրային ծածկագրով 580.0 քմ օրինական հողամասի վրա 1984թ. կառուցված 188.3 քմ մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:

3. ՀՀ Կառավարության 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4. Զարուհի Մարգարյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող 04-043-0840-

կադաստրային ծածկագրով 580.0 քմ մակերեսով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված ծածկը՝ 10.1 քմ մակերեսով ճանաչել օրինական:

5.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ընդհանուր արտաքին 10.1 քմ մակերեսով ինքնակամ օժանդակ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ 725.4<< դրամ ընդհանուր 7325 (յոթ հազար երեք հարյուր քսանհինգ) << դրամ:

7.Զարուհի Մարգարյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող 04-043-0840-կադաստրային ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Մայիսյան գյուղ Այգեգործական 4-րդ թաղամասի 8-րդ փողոց 3/1:

8.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող 04-043-0840- կադաստրային ծածկագրով գույքի հաշվառման (չափագրման)տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023NH6TKJ:

9.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 31-ը օգոստոսի 2023թ. թիվ 1093-Ա որոշումը:

10.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. նոյեմբեր 17
ք. Արմավիր